

Covid-19-ի անվտանգության թիւ

- Այս թիւը պատասխանատու է ԲԴՄԾ-ի բոլոր դպրոցների աշխատակիցների, աշակերտների, ծնողների և այցելուների Covid-19-ի համար անվտանգության հրահանգների հաստատման և պարտադրման համար:
- Դեբբի Քակտա – Բիզնես ծառայությունների գերատեսչի տեղակալ
- Սերա Նիման – Կադրերի բաժնի գերատեսչի տեղակալ
- Ջոն Պարամո – Կրթական ծառայությունների գերատեսչի տեղակալ
- Ստեյսի Քաշման – Ուսանողական ծառայությունների վարիչ
- Փիտր Քնապիլ – Տարրական կրթության վարիչ
- Լարրի Քրոսս – Շինությունների բաժնի վարիչ
- Լենորա Ագիլերա – շրջանի բուժքույր և հանրային առողջապահական գրասենյակի կապավոր
- *Յուրաքանչյուր դպրոց ունի նաև COVID-19-ի անվտանգության թիւ:

Երբ աշխատում եք ԲԴՄԾ-ի ցանկացած դպրոցում, դուք պետք է հետևեք հետևյալ կանոններին.

- Դիմակով ծածկել բերանն ու քիթը (երեսի վահանի տակից պետք է դիմակ կրել)
- Պահպանել ֆիզիկական հեռավորություն
- Հաճախակի լվանալ/ախտահանել ձեռքերը

COVID-19-ի ախտանշանների մասին հավելյալ տեղեկություն ստանալու համար հյուրընկալել <http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/>

COVID-19

(Կորոնավիրուս 2019)

Կալիֆոռնիայի հանրային առողջապահության գրասենյակն առաջարկում է հետևյալ քայլերը շնչառակա ուղիների վիրուսի տարածումը կանխելու համար.

ԼՎԱՏԵՔ ՁԵՐ ՁԵՌՁԵՐԸ

Կանոնավոր կերպ լվացեք ձեր ձեռքերը օձառով և ջրով:

Ծածկեք ձեր բերանը փռշտալիս և հագալիս

Չագուստի թևով կամ մեկ անգամ օգտագործվելիք անձեռոցիկով ծածկեք ձեր բերանը հագալիս կամ փռշտալիս:

Ձեռք մի տվեք

Ձեռք մի տվեք ձեր աչքերը, քիթը կամ բերանը չլվացած ձեռքերով:

Հեռավորություն պահպանեք

Հեռու մնացեք հիվանդ մարդկանցից:

Մնացեք տանը

Եթե շնչառական ուղիների հիվանդության ախտանշաններ ունեք, որոնցից են ջերմությունը կամ հազը, մնացեք տանը:

Օգնության դիմեք

Եթե Կորոնավիրուսի ախտանշաններ ունեք, ՋԱՆԳԱՀԱՐԵՔ ձեր բժշկին:

Հավելյալ տեղեկություն

Հետևեք Կալիֆոռնիայի հանրային առողջապահության բաժնի հրահանգներին.

@capublichealth և www.cdph.ca.gov



lth:



Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջան



Աշխատակազմի
առողջության և
անվտանգության
ռեսուրսներ և
տեղեկություն
COVID-19-ի համար

«Մենք հուշում ենք» Առողջության և անվտանգության մտահոգությունների զեկուցում

ԲԴՄՇ-ում է գործում «Մենք հուշում ենք» թեժգիծը, որտեղ աշխատակիցները կարող են զեկուցել աշխատավայրի անվտանգության կամ Կորոնավիրուսի հետ կապված մտահոգությունները զանգահարելով 1-800-873-7283: Կարող եք անանուն մնալ և ԲԴՄՇ-ն կհետևի դրան: Մենք ցանկանում ենք, որ դուք հարցերը լուծեք ձեր ղեկավարի կամ արհմիության ներկայացուցչի հետ, բայց սա մեկ այլ մեթոդ է ձեր մտահոգություններն անանուն կերպ հայտնելու համար: Զեկույցը ստանալուց հետո, շրջանը կլուծի առաջացած խնդիրները:

Աշխատանքից բացակայել

Խնդրում ենք դիմել ձեր ղեկավարին կամ կադրերի բաժնին (HR), եթե պետք է աշխատանքից բացակայեք Covid-19-ի պատճառով: Դուք կարող եք որակավորվել «Կորոնավիրուսի ակտ ընտանիքների համար» օրենքի ներքո (Family First Corona Virus Act leave): Ահա ռեսուրսների կայքը.

<https://www.labor.ca.gov/coronavirus2019/#chart>

<https://www.dol.gov/agencies/whd/pandemic/ffcr-employee-paid-leave>

Ախտանշանների ստուգում տնային պայմաններում

Աշխատանքի ժամանելուց առաջ, բոլոր աշխատակիցները պետք է լրացնեն աշխատավայրի ախտանշանների փաստաթուղթը: Այն կարելի է լրացնել առցանց կամ դպրոցում թղթի վրա: Դուք պետք է չափեք ձեր ջերմությունը, ստուգեք ախտանշանները և նշեք, եթե շփվել եք COVID-19-ով կաստակծվող անձի հետ: Յուրաքանչյուր դպրոց ջերմաչափ ունի, ձեր օգտագործման համար: Եթե դուք ախտանշաններ ունեք, պետք է դիմեք ձեր բժշկին քննություն անցնելու համար: Ախտանշանների ուղեցույցները տեղադրված են այս կայքում.
<http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/docs/business/EmployeeScreening.pdf>.

Քննություն

- Դիմեք ձեր բժշկին
- Urgent Med – 2005 W. Alameda
<https://urgentmednetwork.com/burbankurgentcare/>
- CVS – 1820 Verdugo Burbank
- MEND – 4849 Van Nuys Blvd. Ste. 100
<https://www.mendurgentcare.com/>
- LA County Testing Sites –
<https://covid19.lacounty.gov/testing/>

COVID-19-ի ախտանշաններ

- Ջերմություն
- Հազ
- Հոգնածություն
- Դողերոցք
- Գլխացավ
- Կոկորդացավ
- Սրտխառնոց կամ փսխում
- Լուծ
- Շնչահեղձություն
- Շնչառության դժվարություններ
- Քթարտադրություն
- Մկանային կամ մարմնային ցավեր
- Համի և հոտի կորուստ

Հիվանդ ե՞ք, մնացե՞ք տանը

Եթե աշխատակիցը հիվանդանում է աշխատանքի վայրում, նա պետք է դիմի իր բժշկին: Կարող եք նաև խորհրդակցել դպրոցի բուժքրոջ հետ: Դրանից հետո դուք պետք է հետևեք ձեր բժշկի առաջարկներին: Խնդրում ենք ծանոթանալ Լոս Անջելեսի գավառի մեկուսացման հրահանգների հետ Covid-19-ի վարակի տարածումը կանխելու համար.
<http://publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/covidisolation/>

Բացի դրանից, եթե դուք կարծում եք, որ շփվել եք Covid-19-ով կասկածվող անձի հետ աշխատանքի վերադառնալուց 14 օր առաջ, դուք պետք է դիմեք ձեր բժշկին: Եթե առաջարկվի կարանտինի տակ մնալ, ահա Լոս Անջելեսի գավառի հրահանգները կարանտինի վերաբերյալ.

<http://publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/covidquarantine/>.